«ԴԻՎԱՆ ՀԱՅ ՎԻՄԱԳՐՈՒԹՅԱՆ», պրակ 7, Ուկրաինա—Մոլդովա, կազմող՝ Գ. Մ. Գրիգորյան. *Երևան, 1996, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, տպաքանակ 500, 410 էջ։*

Հայերեն վիմագիր արձանագրությունների վերծանություններին նվիրված չափազանց արժեքավոր այս մատենաշարը, որն ըստ տարածաշրջանների ներկայացնում է ազգագրագիտական եզակի նշանակություն ունեցող նյութը, որպես կանոն լույս է տեսնում խիստ երկարատև ընդմիջումներով. բավական է նշել, որ նախորդ՝ 6-րդ հատորը լույս է տեսել 1977 թ.։ Եթե հաշվի առնենք նաև, որ վերջին հատորի պատրաստման աշխատանքները սկսված են եղել դեռևս 1960-ական թթ. վերջերից (այդ մասին նշված է պրակը կազմողի խոսքում), ապա պարզ կդառնա, որ այն շուրջ 3 տասնամյակի տևողությամբ հետազոտությունների արդյունք է, հետևաբար, մեր խորին համոզմամբ, կարող էր ներկայանալ որպես հիմնարար մի աշխատություն։

Սակայն, կարդալով մատենաշարի 7-րդ պրակը և միանգամայն ողջունելով նրա հրատարակման փաստը, ստիպված ենք արձանագրել, որ տվյալ դեպքում աշխատությունն զուրկ չի թերություններից։ Հարկ ենք համարում կատարել մի շարք լրացումներ։

Գրքի № 206 արձանագրության 2-րդ հրատարակիչը (Մինաս Ոժկյանից հետո) եղել է Արել վարդապետ Մխիթարյանցի («Մեղու Հայաստանի», 1859, № 49, էջ 392) և ոչ թե Տեր-Աբրահամյանը։ Վիմագրի նախկին հրատարակիչների ցուցակում չկա Արել վարդապետի անունը։ 1837—40 թթ. ընթացքում նրա կատարած ճամփորդական դրառումները հոդվածաշարով լույս են տեսել հիշյալ շարաթաթերթում և հաղեցած են կարևոր տվյալներով։ Ի դեպ, արձանագրությունը հրատարակվել է նաև «Տարտպ» հանդեսում (1897, № 41, էջ 649), որը նույնպես հղված չէ։

№ 232 արձանագրությունը, որը վերաբերում է դեպի Ս. Խաչ վանքը տանող ճանապարհի վերանորոգմանը, հրատարակել է նաև Հովհ. Ապենդիարյանը՝ Ս. Խաչ վանքին նվիրված արժեքավոր և ընդարձակ հոդվածում («Մշակ», 1892, № 46, էջ 2)։

Սիմֆերոպոլի հայոց Ս. Աստվածածին եկեղեցին, որը 1897 թ. հրդեհվել էր և նորոգումից հետո վերստին օծվել 1898 թ. հունվարի 1-ին («Նոր-Դար», 1898, № 15, էջ 3), կից ուներ զանգակատուն։ Վերջինս իր ծախսով կառուցել էր Մերկերիտ Ադա Մոմճյանը, որն էլ վախճանվելուց հետո (1872 թ.) թաղվել է նույն զանգակատան պատի տակ։ Ահա այս բարեգործ անձի մարմարակերտ տապանաքարի արձանագրությունը, որը հրատարակված է եղել ժամանակի պարբերական մամուլում («Մեղու Հայաստանի», 1878, № 1, էջ 2), և որը, սակայն, դուրս է մնացել «Դիվանի» սույն պրակից (տե՛ս էջ 122)։

ՄԷՐԿԷՐԻՈՍ ԱՂԱՅ ՄՈՄՃԵԱՆ
ՉԷ ԱՅՍ ՄԱՀԱՐՁԱՆ ԿՈՐՈՂ ՔՈՅ ՓԱՌԱՑ,
ԱՅԼ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆՍ ԶՈՐ ԶԵՌՔ ՔՈ ԿԱՆԳՆԵԱՑ.
ԱՄՈՒԼ ՔՈ ԲՆՈՒԹԵԱՆ ՀԱՆՃԱՐ ՔՈ ՅԱՂԹԵԱՑ.
ԺԱՄԱՆԳ ՔԵԶ ՐՈՂԵՐ ԶՄԱՆԿՏԻՆ ՀԱՅԿԱԶԱՆՑ
ԶԴՊՐՈՑ ՏԱՃԱՐԻՍ ԱՒԱՆԴԵԱԼ ՔՈ ԿՏԱԿ
ՓԱՅԼԵՍՅԷ ՅԱՒԵՐԺ Ի ՔՈ ՅԻՇԱՏԱԿ,
ՎԱԽՃԱՆԵԱԼ Ի 13 ՕԳՈՍՏՈՍԻ
1872 ԱՄԻ, Ի ՀԱՍԱԿԻ 62 ԱՄԱՑ։

Պրակի կազմից դուրս է մնացել նաև զանգակատան շինարարական արձանագրությունը («Մասյաց Աղավնի», 1860, փետրվար, էջ 26)։

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ ՍՐԲՈՅ ՏԱՃԱՐԻՍ ԿԱՌՈՅՑ ՄԵՐԿԵՌԻՈՍ
ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ ՄՈՄՃԵԱՆ Ի ՅԱՒԵՐԺԱԿԱՆ ՅԻՇԱՏԱԿ
ԻՐ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ. ՌՃԺԴ=1864։

Պրակի նույն՝ 122-րդ էջում նշվում է, որ կաթոլիկ հայերի կառուցած եկեղեցու հիմնադրման թվականն ու անունը հայտնի չեն։ Իրականում Սիմֆերոպոլի հայ-կաթոլիկ եկեղեցին իր ծախսով 1863 թ. կառուցել է տոնական պատվավոր քաղաքացի Պաղդիս Նալբանդյանցը։ Նա վախճանվել է 1864-ին և թաղվել եկեղեցուն կից պարտեզում («Մեղու Հայաստանի», 1878, № 47, էջ 3)։ Մարմարակերտ տապանաքարին առձանագրված է եղել.

ՏԱՊԱՆ ՀԱՆԳՈՍՏԵԱՆ ՍԱՐԳԻՍ
ՏՈՎՀԱՆՆԵՍՅԱՆ ՆԱԼՊԱՆԴԵԱՆ,
ՎԱԽՃ. 1 ՄԱՅԻՍԻ 1864 Թ., 66 ԱՄԱՑ։

Մյուս երեսին.

ՏԱՊԱՆ ՀԱՆԳՈՍՏԵԱՆ ՍՈՓԻԱՅ
ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ՆԱԼՊԱՆԴԵԱՆ, ՎԱԽՃԱՆ.
1 ՓԵՏՐՎ. 1862 Թ., 38 ԱՄԱՑ։

Երկու արձանագրերն էլ դուրս են մնացել «Դիվանի» հատորից, իսկ եկեղեցու անունն ու կառուցման թիվը վկայված են բազմաթիվ աղբյուրներում։ Մասնավորապես հայտնի է, որ 1863 թ. փետրվարի 2-ին օծվել են եկեղեցին և առաջնորդարանի շենքը, որոնց վրա նույն Ս. Նալբանդյանցը ծախսել էր շուրջ 60 000 ռուբլի («Նոր-Դար», 1887, № 93, էջ 2–3), իսկ 1913 թ. մայիսի 5-ին քաղաքաբնակ հայ կաթոլիկները մեծ շուքով նշել էին Ս. Փրկիչ եկեղեցու հիմնադրման 50-ամյակը («Մշակ», 1913, № 105, էջ 3)։ Ինչպես տեսնում ենք, հայտնի են ոչ միայն եկեղեցու անունն ու կառուցման թվականը, այլև մեկենասի անունն ու ծախսված դրամարի չափն իսկ։

Հատորի 142-րդ էջում գրված է, որ Արմյանսկի Երրեմնի հայոց եկեղեցին ունեցել է նաև զանգակատուն, սակայն կառուցման թվականը չի նշված։ Ավելորդ չենք համարում նկատել, որ զանգակատան շինությունը 1871 թ. ավարտին է հասցրել Երեցփոխ Մկրտիչ Օրերյանը, ծախսելով 6000 ռուբլի («Նոր-Դար», 1886, № 102, էջ 3)։

148-րդ էջում կազմողը նշել է, որ XIX դարում Բախչիսարայում եղել է Ս. Աստվածածին բարաշեն ու գմբեթավոր եկեղեցի, բայց այս տեղեկությունը չի լրացրել հետևյալ կարևոր վկայությամբ. «Եկեղեցին օծել է հանգուցյալ Արղությանց Հովսեփ արքեպիսկոպոսը 1787 թվին» («Մեղու Հայաստանի», 1878, № 21, էջ 3)։

Նույն՝ 148-րդ էջում ասված է, թե «Մնաստոպոլ քաղաքում հայկական պատմական հուշարձաններ չկան»։ Ի՞նչ եղան հայ-կաթոլիկ եկեղեցին, որը 1889-ին ենթարկվել էր նորոգման և աղոթատունը, որի կառուցմանը ձեռնամուխ էին եղել 1903 թ. («Նոր-Դար», 1888, № 157, էջ 3 և 1903, № 66, էջ 1)։

251-րդ էջում № 596 արձանագրությունը և նրան վերաբերող տվյալները հրատարակված են աղավաղված։ Նախ՝ այդ տապանագիրը Ս. Նիկողայոս եկեղեցու մոտ չէր, այլ Ս. Ավետյաց եկեղեցու, իսկ ավագ քահանա Սուրենյանցի հրատարակության մեջ այն հետևյալ տեսքն ունի.

ԹՎԻՆ ՀԱՅՈՑ ՁՈՐ ՀԱՆԳԵԱՒ ԵՒ ԹԱՂԵՑԱՒ
ՊԱՆ ՅԱԿՈԲ ՈՐԴԻ ԱՄԻՐՃԱՆԱՅ։

244-րդ էջում № 576 արձանագրության նախկին հրատարակիչների թվում չի հիշվում Սուրենյանց քահանայի անունը («Մասյաց Աղավնի», 1865, էջ 247)։

Էջ 249-ում № 590 արձանագրության նախկին հրատարակիչների ցանկից վրիպած է նույն Սուրենյանցը (նշվ. հոդվածը, էջ 247)։

Պրակի՝ Ժվանեց բնակավայրին վերաբերող բաժնում վրիպած է տեղի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու արևմտյան դռան առջև դնված մի տապանաքարի արձանագրությունը (նշվ. հոդվածը, էջ 248).

ԱՅՍ ՇԻՐԽՄՍ ՀԱՆԳՍՏԱՐԱՆԻՆ
ԽԱՐԻՊՇԱՀԿԱՅ ՍՂԳԱՏՈՀՄԻՆ
ՊՈՏԱՅԻ ՊԱՐՈՆ ՅԱԿՈԲԻՆ
ՈՐԴՈՒՆ ԱՆՈՒԱՆԵԱԼ ՆԱՂԱՐԻՆ
ՈՐ ՓՈԽԵՑԱՒ Ի ԿԵԱՆՍ ԹՎԻՆ

ՀԱՅԱՐ ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ ՀԻՆԿԻՆ ԱՊՐԻԼԻ ՏԱՍՆ ԵՐԵՔԻՆ ՀԱՆԴԻՊՈՂՔ ՅԻՇԷՔ ՍՈՐԱ ՀՈԴԻՆ,

255-րդ էջի № 604 արձանագրությունը առաջին անգամ տեսել ու նկարագրել է «Արձագանք» շաբաթաթերթի թղթակից «Ճանապարհորդը» 1884 թ. (№ 37, էջ 544), ուր մասնավորապես ասված է. «...առաջ բան մեկնելս Օղեսայից ես հաճախեցի տեղվույս թանգարանը, ուր, ինչպես լսել էի Լազարյան ճեմարանի հունաց լեզվի ուսուցիչ պ. Պ. Լ....ից, կան մի քանի հայկական արձանագրություններու արդարև, ես տեսա այդ արձանագրությունները, որոնք թվով չորսն են. գոքա գոված են հայոց երկաթագիր գրերով. չորսից երկրը ճեղքված քարի կտորներ են միայն և նոցա վրա հազիվ նշմարվում են կես բառեր կամ առանձին գրեր ու միանգամայն անընթեռնելի են, իսկ չորրորդը բառանկյունի քարե տախտակ է, որի վրա արձանագրությունը գեղեցիկ կերպով պահպանված է։ Տախտակը, ինչպես երևում է, հանված է դամբարանական շիրմի վերայից, իսկ արձանագրությունը բանկակված է ի հիշատակ երեք անձանց՝ Փառակեցի Ոսկանանց Սահակի և նորա երկու դստերաց, որոնք մեռել են հայոց ՌՃՂԲ թվականին, այսինքն 1743 թ.։ Թանգարանի սպասավորը ինձ հաղորդեց, որ չորս քարերն էլ գտել են Խրիմում...»։

Օղեսայի բաժնում կաղմողը չի տվել մեկ այլ վիմագրի նկարագրություն, որն անջուշտ, ես հարկ էր ծանոթագրել։ Ահա այն. «Իշխան Էմիրետինսկու՝ բաղարից ոչ հեռու գտնվող կալվածքում այս օրերս գտնվել է մի մարմարյա գերեզմանաքար, որի վրա հայերեն տառերով գրված է, որ այդ տապանը Թովմաս Այվազ Օղլուն է պատկանում։ Այդ քարի վրա արձանագրված է Դավթի սաղմոսը և փորագրված են երեք հատ մոմեր։ Քարի վրա գրված է 1186 թիվը, ուրեմն 705 տարվա գերեզմանաքար է» («Մշակ», 1891, № 108, էջ 1—2)։

Աղքերմանի Ս. Օղսենտ եկեղեցու բաժնում (էջ 261—267) կաղմողը առանց հղման է թողել «Զ. Ս.» ստորագրությամբ մի կարևոր հոդված («Նոր-Դար», 1889, № 59, էջ 3), ուր հրատարակված են թվով 6 վիմագրեր («Դիվանի» №№ 625, 626, 627, 628, 629, 630)։ Ի դեպ, «Զ. Ս.»-ն № 627 արձանագրության առաջին հրատարակիչն է, ինչը «Դիվանում» թյուրիմացաբար վերագրված է իրեն՝ կաղմողին, իսկ № 640 արձանագրության առաջին հրատարակիչը ոչ թե Քուչուկ-Հովհաննեսովն է, ինչպես հղել է կաղմողը, այլ նույն պրն. «Զ. Ս.»-ն («Նոր-Դար», 1889, № 59, էջ 3)։

Բացի այդ, պրակի № 626 և № 630 վիմագրերի առաջին հրատարակիչն էր ավագ քահանա Սուքենչանցը («Մասյաց Աղավնի», 1863, 1 հունիս. էջ 169), այլ ոչ Քուչուկ Հովհաննեսովն ու Մելիքսեթ-բեկը՝ ինչպես հղված է պրակում։

Աղքերմանի բաժնում վոիված է արդեն 1863 թ. ավերակ վիճակում գտնվող մի եկեղեցու արձանագրությունը, որի հրատարակիչն է նույն Սուրենյաց ավագ քահանան («Մասյաց Աղավնի», նույն տեղում).

ՎԵՐԱՏԻՆ ՆՈՐՈԳԵԱԼ ԳՐԵՑԱԻ ՅԱՆԿ ԳԱՆՁԱՐԱՆԻՍ, ԹՎ. ՌՃՂԶ, Ի ԾՈՎԱՀԱՅԵԱՑ ՔԱՂԱՔՆ ԱԳՔԻՐՍԱՆ, Ի ԴՈՒՌՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ, ՍՈՒՐԲ ՕԳՍԵՆԴԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԱՒԵՏԱՐԱՆՉԻՆ, ԵՐԻՑ ՍՐԲՈՑ ՏԱՃԱՐԱՑՆ։

«Ուկրաինա» բաժնից ընդհանրապես դուրս են մնացել մի շարք հայկական բնակավայրեր և նրանցում առկա արձանագրական նյութը։ Մասնավորապես, ինչպե՞ս կարելի էր անտեսել Նոզայսկ (այժմ՝ Պրիմորսկ), Մելիտոպոլ, Լուգանսկ (Վորոշիլովգրադ), Խարկով և այլ հայ համայնքները, իսկ թե որքան կարևոր էինք գտնում՝ փորձենք ամենահամառոտ կերպով (միայն մի քանիսն իրոք նմուշ) նեղկայացնել ստորև։

Նոզայսկ—հայերն այդտեղ հաստատվել են 1812 թ. և կառուցել փայտաշեն եկեղեցի։ 1843-ին փայտաշեն եկեղեցին փոխարինել են հողաշենով, որն էլ 1868-ին փոխարինել են քարե նոր շինվածքով («Արարատ», 1884, հունիս, էջ 275—277)։ Արդեն 1882-ին այդ եկեղեցին վտանգավոր ճաքեր ուներ և վերանորոգումների անհրաժեշտություն կար, բայց Նոզայսկի 40 տուն հայերը որոշել են փոխանակ նորոգության, «ի հիմանէ» նոր եկեղեցի կառուցել։ 1887 թ. նոյեմբերի 11-ին Նոզայսկում օծվեց Ս. Աստվածածին նորակառույց եկեղեցին («Նոր-Դար», 1887, № 211, էջ 2)։

Մելիտոպոլ—հայերն այդտեղ հաստատվել են միայն 1840-ական թթ. և մինչև 1884 թ., երբ գաղութն արդեն բաղկացած էր 30 ընտանիքից, ունեին միայն մի աղոթատուն։ 1889-ին, շնորհիվ Ավետիք Խլերնիկյանի, մելիտոպոլցիներն ունեցան «...մի հոյակապ եկեղեցի քաղաքի կենտրոնում. եկեղեցու բակում կա մի վայելուչ շենք բահանայի բնակության համար և գեղեցիկ շինություն երկսեռ դպրոցի համար։ Դպրոցն իր գոյությամբ պարտական է քաղաքի մեջ մեծ հեղինակություն ունեցող պ. պ. Հովհաննես և Պետրոս Չերնիկյաններին...» («Մշակ», 1889, № 64, էջ 2)։ Վերջինս 3 000 ռուբլի արժողությամբ իր սեփական տունը նվիրել է հայոց դպրոցին։ Ի դեպ, եկեղեցու հիմնարկեքը կատարվել է 1883 թ. հոկտեմբերի 15-ին («Արարատ», 1883, դեկտ., էջ 549)։

Խարկով—մինչև 1905 թ. դեկտեմբերի 25-ը, երբ տեղի նորակառույց եկեղեցում մատուցվեց առաջին պատարագը, Խարկովի 35—40 տուն հայերը ունեին միայն մի հասարակ մատուռ։ 1924 թ. Խարկովի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին Ս. Էջմիածնից եկեղեցական դրականություն էր ստացել (ՀՀ ՊՊԿԱ, ֆոնդ 409, ցուցակ 1, գործ 3392, թերթ 1)։

Լուգանսկ—«Եկատերինոսլավ նահանգի Լուկանսք քաղաքի հայ հասարակությունն, որ շատ տարիներե ի վեր վաճառականությամբ հաստատած են այդտեղ իրենց բնակությունը, ցանկանալով ունենալ նույն բաղաքին մեջ հայոց աղոթատուն և մի տեղական հայ քահանա՝ խնդրամատույց են եղել այդ մասին վիճ[ակի] հ[ոգևոր] իշխանության» («Նոր-Դար», 1885, № 185, էջ 3)։ Շատ չանցած լուգանսկցի հայերի ցանկությունը իրականություն է դարձել, իսկ եկեղեցին օծվել է Ս. Լուսավորիչ անվամբ։ 1913 թ. այդ եկեղեցու բակում հողին էր հանձնվել տեղացի Սարգիս Փափազյանի մարմինը, որը եկեղեցուն և դպրոցին կտակել էր 100 000 ռուբլի («Մշակ», 1913, № 265, էջ 3)։

Քիշինևի Ս. Աստվածածին եկեղեցու 1804 թ. նորոգման մասին պատմող արձանագրության համար (էջ 281) իրոք նախկին հրատարակիչ նշվել է միայն Ա. Թորամանյանի 1991 թ. հրատարակված աշխատությունը, մինչդեռ 1863 թ. վիմագիրն ամբողջությամբ հրատարակվել էր («Մասյաց Աղավնի», 1863, 1 հուլիս, էջ 206)։

Ի դեպ, նույն եկեղեցու. «...որմոյն մէջ ամփոփեալ մարմարիոնեայ» բարի վրա եղել էր նախկինում հրատարակված, բայց «Դիվանի» տվյալ հատորից դուրս մնացած հետևյալ վիմագիրը («Մասյաց Աղավնի», նույն տեղում).

ԱՒԼՈՅԻ ԱՅՍՐ ԱՐՁԱՆԻ ՈՐՄՈՅ ՏԱՃԱՐԻ ՀԱՆԳՉԻ
ՄԱՐՄԻՆ ԴՐԱԿՈՒՄԱՆ ՊԷՅԻ ԵՒ ՏԷՅՍՏՎԻԹՅՃԼՆԻ
ՍՏԱՏՍԿԻ ՍՈՎԷԹՆԻԿ ԵՒ ԿԱՒԱՎԵՐ ՄԱՆՈՒԿ ՊԷՅԻ
ՀԱՆԳՈՒՑԵԼՈՅ Ի 20 ՅՈՒՆԻՍԻ 1817, Ի 48 ԱՄԻ
ԿԵՆԱՑ ԻՒՐՈՅ։

302-րդ էջում Հնչեշտի համայնքին վերաբերող շարադրանքում վրիպել են 1860-ական թթ. Հնչեշտում հայոց դպրոցի գործունեությանը, 1872-ին՝ Մանուկ-բեյի որդու՝ Հովհաննես բեյի (ծնվ. 1810 թ.) ծախսով հայոց եկեղեցու կառուցմանը վերաբերող տվյալները և այլն։

Մեզ հայտնի է, որ Հնագիտության և Այդպաղության ինստիտուտի վիմագրության բաժնի վարիչ և սույն պրակի հեղինակ Գրիգոր Գրիգորյանը պատրաստվում է մատենաշարի 8-րդ պրակով ներկայացնել նաև Իրանստանի հայ աղոթավայրերի վիմագրական նյութը։ Ողջունելով ձեռնարկը, միաժամանակ հույս ենք հայտնում, որ ի տարբերություն ներկա պրակի, այն կլինի առավել ամբողջական։

Ս. Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ